ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» նոյեմբերի 2013թ. N__-Ա

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ՀՀ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ ՌԴ ՍՏԱՎՐՈՊՈԼԻ ՄԱՐԶԻ ՍՏԱՎՐՈՊՈԼ ՔԱՂԱՔ ՄՈՒՆԻՑԻՊԱԼ ՄԻԱՎՈՐԻ ՄԻՋԵՎ ԵՂԲԱՅՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետին համապատասխան՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Հաստատել 2013թ. հոկտեմբերի 11-ին կնքված «ՀՀ Երևանի քաղաքապետարանի և ՌԴ Սատվրոպոլի մարզի Ստավրոպոլ քաղաք մունիցիպալ միավորի միջև եղբայրացման մասին» համաձայնագիրը՝ համաձայն հավելվածի։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՀՀ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ ՌԴ ՍՏԱՎՐՈՊՈԼԻ ՄԱՐԶԻ ՍՏԱՎՐՈՊՈԼ ՔԱՂԱՔ ՄՈՒՆԻՑԻՊԱԼ ՄԻԱՎՈՐԻ ՄԻՋԵՎ ԵՂԲԱՅՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Համաձայնագիրը կնքվել է՝ Ստավրոպոլ և Երևան քաղաքների միջև գործընկերային բարեկամական կապեր հաստատելու փոխադարձ ցանկությունից ելնելով: Նախատեսվում է իրականացնել համագործակցություն տարբեր ոլորտներում՝ մասնավորապես մշակութային, հանրակրթության, սպորտի և երիտասարդության հարցերի, զբոսաշրջության ինչպես նաև փորձի փոխանակում երկու քաղաքապետարանների աշխատակազմերի միջև:

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետին համապատասխան՝ պահանջվում է վերոնշյալ համաձայնագրի հաստատումը Երևան քաղաքի ավագանու կողմից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՀՀ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ ՌԴ ՍՏԱՎՐՈՊՈԼԻ ՄԱՐԶԻ ՍՏԱՎՐՈՊՈԼ ՔԱՂԱՔ ՄՈՒՆԻՑԻՊԱԼ ՄԻԱՎՈՐԻ ՄԻՋԵՎ ԵՂԲԱՅՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«ՀՀ Երևանի քաղաքապետարանի և ՌԴ Սատվրոպոլի մարզի Ստավրոպոլ քաղաք մունիցիպալ միավորի միջև եղբայրացման մասին» համաձայնագրի հաստատման մասինի Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի 2013 թվականի բյուջեում եկամուտների և ծախսերի փոփոխություն չի առաջանում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՀՀ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՎՌԴ ՍՏԱՎՐՈՊՈԼԻ ՄԱՐԶԻ ՍՏԱՎՐՈՊՈԼ ՔԱՂԱՔ ՄՈՒՆԻՑԻՊԱԼ ՄԻԱՎՈՐԻ ՄԻՋԵՎ ԵՂԲԱՅՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«ՀՀ Երևանի քաղաքապետարանի և ՌԴ Սատվրոպոլի մարզի Ստավրոպոլ քաղաք մունիցիպալ միավորի միջև եղբայրացման մասին» համաձայնագրի հաստատման մասին Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման կամ փոփոխության անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հավելված

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՀՀ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ ՌԴ ՍՏԱՎՐՈՊՈԼԻ ՄԱՐԶԻ ՍՏԱՎՐՈՊՈԼ ՔԱՂԱՔ ՄՈՒՆԻՑԻՊԱԼ ՄԻԱՎՈՐԻ ՄԻՋԵՎ ԵՂԲԱՅՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Երևանի քաղաքապետարանը /Հայաստանի Հանրապետություն/ և Ստավրոպոլի մարզի Ստավրոպոլ քաղաք մունիցիպալ միավորը /Ռուսաստանի Դաշնություն/, հաշվի առնելով Երևան և Ստավրոպոլ քաղաքների միջև գործընկերային բարեկամական կապեր հաստատելու փոխադարձ ցանկությունը, միջազգային միջհամայնքային համագործակցության զարգացման, քաղաքների բնակիչների միջև փոխըմբռնման և բարեկամության ամրապնդման նպատակով, հիմնվելով երկու քաղաքների միջև հաստատված համագործակցության ավանդույթների վրա, ինչպես նաև նպատակ ունենալով հարաբերություններին հաղորդել դինամիկ և զարգացող բնույթ, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

Կողմերն իրենց իրավասությունների շրջանակներում, Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության սահմանադրությանը, Երևան և Ստավրոպոլ քաղաքների համայնքային իրավական ակտերին համապատասխան կիրականացնեն համագործակցություն հավասարության, փոխշահավետության, հարգանքի և վստահության սկզբունքների հիման վրա:

I. Գործընկեր քաղաքների տեղական ինքնակառավարման մարմինների համագործակցություն

1.1 Տեղական ինքնակառավարման մարմինների աշխատանքները ուսումնասիրելու նպատակով՝ աջակցել գործընկեր քաղաքների պաշտոնական պատվիրակությունների փոխանակման կազմակերպմանը:

1.2 Կայուն քաղաքային զարգացման, համայնքային կառավարման, ինովացիոն տեխնոլոգիաների կիրառման ոլորտներում լավագույն փորձերի վերաբերյալ տեղեկատվության փոխանակություն:

1.5 Իրականացնել գործընկեր քաղաքների պատմության, մշակույթի, ավանդույթների ճանաչմանն ուղված գործունեություն՝ ներգրավելով ազգա-մշակութային սփյուռքը, զանգվածային լրատվական միջոցները, քաղաքային հասարակության ներկայացուցիչներին:

II. Կրթության ոլորտում

2.1 Գործընկեր քաղաքների ուսումնական հաստատությունների միջև համագործակցություն հաստատել: Աջակցել Երևան քաղաքի Ն.Գոգոլի անվան հ. 35 դպրոցի և Ստավրոպոլ քաղաքի հ. 35 համայնքային բյուջետային ուսումնական հաստատության միջև բարեկամական կապերի զարգացմանը:

2.2 Իրականացնել մանկավարժների և աշակերտների խմբերի փոխանակումներ՝ գործընկեր քաղաքների պատմական և մշակութային արժեքների հետ ծանոթանալու, դասավանդման մեթոդների կատարելագործման և հանրակրթական հաստատություններում ուսումնա-դաստիարակչական աշխատանքների կազմակերպման փորձի ուսումնասիրության համար:

2.3 Կրթության ոլորտում համագործակցության զարգացման նպատակով՝ քույր քաղաքների ուսումնական հաստատությունների աշակերտների միջև ուղիղ կապերի հաստատում, այդ թվում on-line կոնֆերենցիաների կազմակերպման միջոցով:

III. Մշակույթի ոլորտում

3.1 Կազմակերպել Երևան քաղաքում Ստավրոպոլի Մշակույթի օրերի անցկացումը և Ստավրոպոլ քաղաքում Երևանի Մշակույթի օրերի անցկացումը:

3.2 Աջակցել Ստավրոպոլ քաղաքի օրվա շրջանակներում անցկացվելիք ազգային մշակույթների փառատոնին Հայաստանի Հանրապետության ժողովրդական վարպետների և ստեղծագործական խմբերի մասնակցության հարցում,

3.3 Աջակցել Գ.Պրոզրիտելեվի և Գ.Պրավի անվան Ստավրոպոլի պետական պատմա-մշակութային թանգարան-արգելոցում Ստավրոպոլ քաղաքում բնակվող հայ ժողովրդի պատմությանը նվիրված ցուցահանդեսի կազմակերպման և ձևավորման գործում:

3.4 Կազմակերպել երաժշտական և արվեստի դպրոցների փոխայցելություններ, համերգային ծրագրեր:

3.5 Աջակցել երկու քաղաքների գրադարանների միջև համագործակցություն հաստատելու հարցում:

IV. Զբոսաշրջության զարգացում

4.1 Երևան և Ստավրոպոլ քաղաքների միջև զբոսաշրջային կապերի հնարավոր ուղղությունների ձևավորում,

4.2 Տուրօպերատորների, զբոսաշրջային ընկերությունների և հյուրանոցային տնտեսության օբյեկտների ճանաչողական փոխայցելությունների կազմակերպում, զբոսաշրջային գրավչությունների մասին տեղեկատվության փոխանակում,

4.3 Փոխադարձ գովազդային պրոմոարշավների կազմակերպում Երևան և Ստավրոպոլ քաղաքներում:

V. Երիտասարդական քաղաքականության, սպորտի և ֆիզիկական կուլտուրայի ոլորտում

5.1 Աջակցել Երևան քաղաքի սպորտային կազմակերպությունների և Ստավրոպոլ քաղաքի վարչակազմի սպորտի և ֆիզիկական կուլտուրայի վարչության միջև ուղիղ կապերի հաստատմանը:

5.2 Կազմակերպել Երևան և Ստավրոպոլ քաղաքների սպորտային միջոցառումներին պատանի մարզիկների թիմերի մասնակցությունը:

VI. ԶԼՄ-ների համագործակցություն

6.1 Համացանցի միջոցով գործընկեր քաղաքների առավել նշանակալից և հետաքրքիր իրադարձությունների վերաբերյալ տեղեկատվության և տեսանյութերի փոխանակման կազմակերպում:

VII. Եզրափակիչ դրույթներ

7.1 Սույն Համաձայնագրի իրականացման, ինչպես նաև ստանձնած պարտավորությունների վերահսկողության նպատակով կարող են իրականացվել երկկողմ հանդիպումներ, բանակցություններ, նիստեր, ժողովներ և այլ միջոցառումներ՝ Կողմերի պատվիրակությունների և այլ ներկայացուցիչների մասնակցությամբ, ինչպես նաև կարող են ստեղծվել համատեղ հանձնաժողովներ և աշխատանքային խմբեր:

7.2 Սույն Համաձայնագիրը ուժի մեջ է մտնում այն պահից, երբ Կողմերը ստանում են Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներքին գործընթացների կատարման մասին վերջին գրավոր տեղեկացումը:

7.3 Սույն Համաձայնագիրը գործողությունը դադարում է, եթե մասնակիցներից մեկը գործունեության ժամկետի ավարտից վեց ամիս առաջ գրավոր չի տեղեկացնում մյուս Կողմին գործունեության դադարեցման իր մտադրության մասին:

7.4 Կատարվել է երկու օրինակից, յուրաքանչյուրը ռուսերեն և հայերեն լեզուներով, ընդ որում երկու տեքստերն էլ համարժեք իրավաբանական ուժ ունեն:

Երևանի քաղաքապետ	Ստավրոպոլի քաղաքագլուխ
Տ.Ա.Մարգարյան	Գ.Ս.Կոլյագին